



**ՔԵՆԹՐԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏՈՐ
ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

Սույն թվականի դեկտեմբերի 29-ից հոկտեմբերի 3-ը Հայոց Հայրապետի հրավերով պաշտոնական այցով Մայր Աթոռում էր գտնվում Քենթրերիի արքեպիսկոպոս և համայն Անգլիայի եպիսկոպոսապետ **դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանը**՝ ի գլուխ անգլիկան եկեղեցու բարձրատիճան հոգեվորականներից բաղկացած մի պատվիրակության, որի կազմում էին ս. Ալբրենսի եպիսկոպոս գերաշնորհ **տ. Ռոբերտ Ռանսին**, անգլիկան եկեղեցու ընդհանուր սինոդի «Առաքելություն և միություն» հանձնաժողովի քարտուղար կանոնիկոս **Ջոն Առնոլդը**, քրիստոնեական ուսմունքի տարածման ընկերության գլխավոր քարտուղար պրն. **Պատրիկ Գիլբերտը**, Քենթրերիի արքեպիսկոպոսի մաստան երեց **Դեվիդ Փենթրը**, անգլիկան եկեղեցու հաղորդակցության բաժնի վարիչ պրն. **Ջոն Մալլար**, անգլիկան եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ կանոնիկոս **Մալքո Մորը** և Հելսինկիի անգլիկան եկեղեցու հոգևոր հովիվ կանոնիկոս **Էրիկ Սթեփլը**:

Այս ստորիվ հանդիսություններին մասնակցելու համար Վեհափառ Հայրապետի կողմից Մայր Աթոռ էին հրավիրվել նաև Երուսաղեմի հայոց ամենատառիվ **տ. Եղիշե սրբազան պատրիարքը**՝ ընկերակցությամբ պատրիարքարանի դիվանապետ **տ. Շահե արքեպ. Աճեմյանի**, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ **տ. Սերոփե արքեպ Մանուկյանը**, Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի հայոց առաջնորդ **տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը**, Կալիֆորնիայի թեմի հայոց առաջնորդ **տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը**, Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հայոց հոգևոր տեսուչ **տ. Ներսես եպս. Պոզապալյանը**:

Այդ օրերին ուխտավորաբար Մայր Աթոռում էին գտնվում նաև Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմերի առաջնորդ **տ. Գարեգին եպս.**

Գազանճյանը, Լոնդոնից՝ տ. Պսակ արքեպ. Թումայանը, և Բեյրութից՝ տ. Գևորգ ծայրագույն վարդ. Կարախյանը:

Հանդիսություններին մասնակցում էին նաև Արարատյան հայրապետական թեմի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Մայր տաճարի լուսարարապետ և Աղրբեջանի թեմի հայոց առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը, Երևանի հայոց թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Ծաքարյանը, վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերադարյանը և Մայր Աթոռի դիվանապետ ու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպս. Բերբերյանը:

ԺԱՄԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԵՐԻ

Սեպտեմբերի 29-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, Երևանի օդանավակայան են ժամանում Մայր Աթոռի հարգարժան հյուրերը:

Հայ և անգլիկան եկեղեցիների հարաբերությունների պատմության մեջ կարևոր մի իրադարձություն էր այն պարագան, երբ առաջին անգամ լինելով անգլիկան եկեղեցու Գերագույն հոգևոր պետը պաշտոնական այցելություն էր տալիս Մայր Աթոռ ս. Էջմիածին և Ամենայն Հայոց Հայրապետին:

Սույն պաշտոնական այցելությունը հանդիսանում է նաև մեր ժամանակաշրջանի Էկումենիկ հարաբերությունների պատմության մի նշանակալից և կարևոր իրադարձություն:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետը, ընկերակցությամբ տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր և շրջապատված հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներով, ջերմորեն ողջունում է Քեմբրեյի արքեպիսկոպոսի և նրա շքախմբի անդամների ժամանումը և բարի գալուստ մաղթում նրանց:

Հուզիչ էր պահը, երբ երկու քույր եկեղեցիների հոգևոր պետերը և նրանց շքախմբի անդամները աստվածաշնչական Հայոց պատմական հողի վրա ջերմորեն ողջագուրվում էին և փոխանակում եղբայրական առաջին համբույրը ի Քրիստոս Հիսուս:

Հանուն ՀՍՍՀ Միհիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի, Մայր Աթոռի հյուրերին ողջունում և բարի գալուստ է մաղթում նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Այնուհետև ավտոմեքենաների շարքը ուղղվում է դեպի Մայր Աթոռ սուրբ Էջմիածին:

Մայր տաճարի զանգերի ուրախ դողանքի ներքո «Հրաշափառ»-ով երկու Հայրապետները եկեղեցական թափոքով առաջնորդվում են Մայր տաճար: Այստեղ, եկեղեցական արարողության ավարտին, Հայոց Հայրապետը հետևյալ բարիգալստյան խոսքով ողջունում է Քեմբրեյի արքեպիսկոպոսի ներկայությունը Մայր տաճարում:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԲԱՐԻԳԱԼՍՅԱՆ ԽՈՍՔԸ

(29 սեպտեմբերի 1977 թ., հինգշաբթի)

Հանուն հայ եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի, Մենք մեծ երջանկությունն ունենք այսօր ողջունելու Ձեզ և Ձեր պատկառելի պատվիրակությանն այստեղ:

Մեզ համար պատմական մի օր է այսօր: Գուցե մեր եկեղեցին և մեր նախորդ հայրապետները վաղուց երազում էին այսպիսի մի օր, երբ հեռավոր քրիստոնյա Անգլիայից Քենթրբերիի արքեպիսկոպոսը՝ անգլիկան եկեղեցու պետը, կժամանի Էջմիածին:

Այս տաճարը, կառուցված 4-րդ դարի սկզբին, կանգուն է և կենդանի մահ այսօր: Մենք զգում ենք, որ այս տաճարի քարերը շնչում են և հոգի ունեն:

Արմատացավ, ամրացավ քրիստոնեական հավատքը Հայաստանի մեջ և ապա սերունդներ և սերունդներ շարունակաբար դարերի ընթացքում իրենց հավատքի վկայությունը բերեցին այդ հավատքի լույսի պայծառությանը: Այդ լույսով կերտվեց հայոց պատմությունը, այդ լույսով սրգասավորվեց ու արդյունավորվեց հայ ստեղծագործ համեմարը և այդ լույսով հայոց հոգու մեջ ծաղկեցին և ամրացան բարոյական առաքինությունները և ազատության տենչը:

Այսօր մենք՝ ժառանգորդները մեր նախորդների, աշխատում ենք հետզհետե ավելի պայծառացնել այս տաճարը և ավելի ու ավելի ոգեկան լույս բաշխել մեր ժողովրդի զավակներին Սովետական Հայաստանում և արտասահմանում:

Ձեր այցելությունը և նման այլ այցելություններ մեզ ավելի են զորացնում մեր այս քրիստոնեական առաքելության մեջ: Այս զգացումներով և մեծ ուրախությամբ կրկին բարի գալուստ ենք մաղթում Ձեզ՝ սիրեցյալ Եղբայր Մեր ի Քրիստոս: Եվ Մենք հույս ունենք, Մենք, ինչպես և այստեղ ներկա գտնվող Մեր բոլոր եղբայրները՝ իրենց գլուխն ունենալով Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքին, որ այս այցելությունը նոր ճանապարհներ բաց կանի, որպեսզի մեր երկու եկեղեցիները ավելի մոտենան իրար, ավելի սերտանան մեր կապերը, և մենք առաջ ընթանանք, ձեռք-ձեռքի տված, քրիստոնեական միության ճանապարհով:

Բարի եկաք, Ձերդ Գերաշնորհություն, թող Աստված օրհնի մեր այս հանդիպումը և ողջագործումը:

Հայոց Հայրապետի բարիգալստյան այս խոսքին պատասխանում է Քենթրբերիի արքեպիսկոպոսը հետևյալ ուղերձով.

ԴՈՎՏ. ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆԻ ԽՈՍԺՐ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ
(29 սեպտեմբերի 1977 թ., հինգշաբթի)

Նորին Սրբություն և Եղբայր Մեր ի Քրիստոս, գերաշնորհ արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, հոգևորականներ և այստեղ հավաքված սիրելի ժողովուրդ.

Շատ երախտապարտ ենք Ձեր բարիգալստյան խոսքի համար՝ ուղղված Մեզ և Մեր շքախմբի անդամներին: Մենք երկար ժամանակ ցանկանում էինք սլցելել այս սուրբ քաղաք և Ձեզ հետ լինել այս սուրբ վայրում:

Այս վայրը, ինչպես Դուք էլ ասացիք, նվիրագործված է հիշատակով բազում սրբերի, բազում դարերի ընթացքում: Ի մտի ունենք ս. Գրիգոր Լուսավորչին և հավատացյալ ժողովրդին, որոնք բարձր և կենդանի են պահել հավատքի լույսը, հակառակ իրենց շուրջը տեղի ունեցած բազում պատահարների այս աշխարհի մեջ:

Մենք զգում ենք նրանց ներկայությունը մեզ հետ և մենք հուսով առաջ ենք նայում այն երջանիկ օրվա երազանքով, երբ մեկտեղ կկարողանանք աղոթել, միաստեղ խորհրդակցել, գաղափար կազմելու համար ձեր եկեղեցու և ձեր ժողովրդի ստեղծած հոգևոր արժեքների մասին:

Հույս ունենք նաև, որ կկարողանանք հանդիպել ձեր հավատացյալ ժողովրդի հետ:

Ձերդ Սրբություն, Մենք մասնավորապես ուրախ ենք, որ մեր այս հանդիպումը զուգահեյտում է Ձեր գահակալության տարեդարձին: Այս առիթով Ձեզ ողջունելու ենք հատուկ ջերմությամբ:

48 տարի առաջ էր, որ Մենք սարկավագ ձեռնադրվեցինք և շուրջ 42 տարի առաջ էր, որ Մենք ընդունեցինք քահանայական ձեռնադրություն Աստուծո տաճարում: Ուստի փառք ենք տալիս Աստծուն իր բարության համար, որ պատեհություն է ընծայել մեզ՝ ծառայելու իր մեծ թագավորության մեջ՝ տարածելով իր լույսը, որ լույսն է աշխարհի:

Այս առիթով Ձերդ Սրբությանը և Ձեր բոլոր եղբայրներին բերում ենք ամբողջ աշխարհի տարածքի վրա գտնվող անգլիկան եկեղեցու և ողջ անգլիկան համայնքի, ինչպես նաև Մեր և Մեր հոգևոր եղբայրների սրտագին ողջույնը:

Կրկին շնորհակալություն ենք հայտնում Ձերդ Սրբությանը Ձեր բարիգալստյան ջերմ խոսքերի համար ի Քրիստոս:

Բարիգալստյան և ողջույնի սույն խոսքերից հետո երկու Հայրապետները իրենց շքախմբի անդամներով Մայր տաճարից առաջնորդվում են Վեհարան, ուր տեղի է ունենում ջերմ զրույց ներկաների միջև:

Ժամը 20-ին, ի պատիվ Քենթրբերիի արքեպիսկոպոսի, Վեհարանի սեղանատանը տրվում է բարիգալստյան ճաշկերույթ՝ մասնակցությամբ նրա շքախմբի բոլոր անդամների և հայ բարձրաստիճան հոգևորականների:

Քենթրբերիի արքեպիսկոպոսը Մայր Աթոռ իր կեցության օրերին հյուրընկալվում է Վեհարանում իրեն հատկացված մասնավոր հարկաբաժնում:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ


Սեպտեմբերի 30-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում Հայոց Հայրապետը, Քենթրբերիի արքեպիսկոպոսը՝ իրենց պատվիրակություններով, և Եղիշե պատրիարքը մասնակցում են աստվածաբանական մի խորհրդակցության:

Խորհրդակցությունում խոսվում է երկու քույր եկեղեցիների առաքելական ավանդությունների և նրանց անցյալ պատմության անկյունաքարձային իրադարձությունների մասին:

Նշվում է, որ 4-րդ դարի սկզբներին Հայաստանում ս. Գրիգոր Լուսավորչի ջանքերով ու առաքելական քարոզությամբ քրիստոնեությունը հաստատվել է որպես պետական կրոն:

Նշվում է նաև, որ 4-րդ դարի սկզբին Բրիտանիայի եպիսկոպոսները մասնակցել են Առյի ժողովին: Պատմական փաստ է, որ նախապես էլ երկու երկրներում առաջին դարից սկսած գոյություն են ունեցել քրիստոնեական համայնքներ:

Քրիստոնեության քարոզությունը Հայոց աշխարհում սկիզբ է առել ս. Թադեոս և ս. Բարթողիմեոս առաքյալների քարոզությամբ և նահատակությամբ:



Հայ ժողովուրդը հանդիսացել է քրիստոնեությունն ընդունած առաջին ազգը ողջ աշխարհում:

Խորհրդակցության ընթացքում արձանագրվում է նաև, որ հաջորդ դարերում հայ և անգլիկան եկեղեցիները հիմքերն են դրել իրենց ժողովուրդների ազգային մշակույթի:

Այսպես՝ 5-րդ դարի սկզբներին հայկական այբուբենի ստեղծումով և Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ ա. Մեսրոպ Մաշտոցը և նրա աշակերտները ստեղծել են հայկական գրականության ոսկեդարը:

Անգլիկան եկեղեցական համայնքները զարգացել են քրիստոնեական միսիոներական շարժման շնորհիվ, հատկապես վերջին երկու և կես դարերի ընթացքում: Այսօր երկու եկեղեցիներն էլ ունեն բազում համայնքներ՝ ցրված ի սփյուռս աշխարհի: Տարբերությունն այն է սակայն, որ հայ ժողովուրդը ցրվել է աշխարհով մեկ հաջորդական հալածանքների և Հայաստանում տիրող քաղաքական և տնտեսական աննպաստ պայմանների քերումով:

Խորհրդակցությունում գոհունակությամբ արձանագրվում է նաև մոտեցումի նմանություն հայ և անգլիկան եկեղեցիների ծեսի վերաբնության հարցում՝ պաշտամունքը հավատացյալներին ավելի հասկանալի դարձնելու մտահոգությամբ, պաշտամունքային հին ավանդական ձևերի նոր գնահատման լույսի տակ:

Սույն խորհրդակցությունում Հայոց Հայրապետը հատկապես վստահեցնում է Քենթրբերիի արքեպիսկոպոսին, որ կանանց քահանայական ձեռնադրությունը անգլիկան համայնքների համար արգելք չի կարող հանդիսանալ երկու եկեղեցիների հետագա բարվոք հարաբերությունների զարգացմանը:

Խորհրդակցության ընթացքում Հայոց Հայրապետը, խոսելով հայ եկեղեցու պատմության և հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ ա. Էջմիածնի կատարած հոգևոր, մշակութային ու հայրենասիրական առաքելության մասին, շեշտում է, որ ա. Գրիգոր Լուսավորիչը 301 թվականին հիմնում է հայ հավատքի կենտրոն Մայր Աթոռ ա. Էջմիածինը որպես եպիսկոպոսական Աթոռ Հայաստանի, կազմակերպում է նրա նվիրապետական, վարչական ու ծիսական կարգը:

Հայ եկեղեցին,—նշում է Հայոց Հայրապետը,—մինչև Քաղկեդոնի ժողովը սերտ հարաբերության մեջ է եղել քրիստոնեական ընդհանրական եկեղեցու հետ և իր աստվածաբանական, քրիստոսաբանական դավանությունը հիմնել առաջին երեք տիեզերական ժողովների բանաձևերի և որոշումների վրա:

Հայ եկեղեցին ոչ քաղկեդոնական եկեղեցի է: Նա պաշտոնապես դատապարտում է Եվտիքեսին ու նրա մոլար վարդապետությունը: Հայ եկեղեցին անխախտ կանգնել է եփեսոսյան քրիստոսաբանական ողղափառ բանաձևերի վրա:

Մայր Աթոռ ա. Էջմիածինն է հայ եկեղեցու դարավոր, պատմական ու միակ կենտրոնը:

Պատմական հանգամանքների քերումով,—ավելացնում է Հայոց Հայրապետը,— հայ եկեղեցին ունի նաև տեղական, մասնավոր Աթոռներ, ինչպիսիք են՝ Կիլիկիայի Կաթողիկոսական մասնավոր Աթոռը՝ հաստատված 1446 թվականին Սիս քաղաքում (Կիլիկիա), Երուսաղեմի և Կ. Պոլսի հա-

յոց պատրիարքական Աթոռները, որոնք ունեն տեղական, վարչական ներքին ինքնավարություն՝ ի հոգևորս եմթակա Մայր Աթոռ ս. Էջմիածնին:

Մայր Աթոռի և վերոհիշյալ Աթոռների միջև միշտ պահպանվել են եղբայրական համագործակցության և սիրո հարաբերություններ:

Իր խոսքի մեջ Հայոց Հայրապետը ավելացնում է, որ միայն 1956 թվականից սկսած արտասահմանի մեր եկեղեցական կյանքում ստեղծվել է որոշ տագնապալի կացություն, երբ Անթիլիաս հաստատված Տանն Կիլիկիո Աթոռը փորձեց դուրս գալ իր տեղական իրավասությունների սահմաններից (Լիբանան, Սիրիա, Կիպրոս)՝ «Սուրբ Էջմիածինը Սովետական Հայաստանի ժողովրդի համար, Անթիլիասը արտասահմանի հայ ժողովրդի համար» նշանաբանով, ինչ որ բնականաբար անընդունելի է Մայր Աթոռիս և մանավանդ սփյուռքի հայության համար:

Այդ եկեղեցական տագնապի ստեղծումից հետո Մայր Աթոռը և Հայոց Հայրապետը բազում անգամներ հետևողական ջանքեր ի գործ են դրել՝ վերականգնելու համար կանոնականությունն ու ներքին խաղաղությունը սփյուռքի մեր եկեղեցական կյանքում:

Այդ ոգով է, որ Մայր Աթոռը 1977 թվականի մայիսին մասնակցել է Անթիլիասում տեղի ունեցած աթոռակից-կաթողիկոսի ընտրության և օծման հանդիսություններին՝ հույս ունենալով, որ իր այդ մասնակցությամբ վերջ կգտնեն անհասկացողությունները երկու Աթոռների միջև:

Այնուհետև Հայոց Հայրապետը Քեմթրբերիի արքեպիսկոպոսին տեղեկություններ է տալիս Սովետական Հայաստանի, հարևան հանրապետությունների և սփյուռքի տիրախմած թեմերի ու թեմական կազմակերպությունների մասին, որոնք գործում են ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության վերին հսկողության ու ղեկավարության ներքո, ըստ կարգաց և կանոնաց Հայաստանյայց առաքելական եկեղեցու:

Իր խոսքի վերջում Հայոց Հայրապետը նշում է նաև, որ Հայաստանում և Սովետական Միության մյուս հանրապետություններում գործող բոլոր հայ եկեղեցիների և պետության միջև հաստատվել են բնականոն հարաբերություններ, և յուրաքանչյուր հայ հավատացյալ վայելում է կրոնի և խղճի ազատություն, ըստ պետական Սահմանադրության:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քեմթրբերիի արքեպիսկոպոսը և նրա շքախմբի անդամները Մայր Աթոռում գտնվելու օրերին այցելում են պատմական վանքեր ու եկեղեցիներ և մայրաքաղաքի տեսարժան վայրեր:

Սեպտեմբերի 30-ին, ուրբաթ օրը, ժամը 12-ին, հարգարժան հյուրերը մեկնում են Սևան, ուր այցելում են տեղի երկու պատմական եկեղեցիներ: Ժամը 17.30-ին Հայոց Հայրապետը և Քեմթրբերիի արքեպիսկոպոսը իրենց շքախմբի անդամներով այցելում են Ծիծեռնակաբերդ, ուր ծաղկեպսակ են դնում 1915 թվականի Ապրիլյան եղեռնի մեկ ու կես միլիոն հայ ճահատակների հիշատակին կառուցված հուշարձանին և հոգվոց արտասանում:

Ավելի ուշ, երեկոյան, Քեմթրբերիի արքեպիսկոպոսը այցելում է հոգևոր ճեմարան, ուր տեսուչ տ. Հովհաննես ավագ քնն. Մարությանը, հանուն ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության, ողջունում է ներկայությունը անգլիկան եկեղեցու հոգևոր պետի և համառոտ գծերի մեջ ներկայացնում հոգևոր ճեմարանի պատմությունը, ուսումնական ծրագիրը և դի-

սանողների թիվը: Արժանապատիվ տեսուչ հայրը երախտագիտությամբ է նշում, որ ճեմարանից շրջանավարտ մի քանի սարկալագներ, Հայոց Հայրապետի կարգադրությամբ և անգլիկան եկեղեցու ղեկավարների քարոչական օժանդակությամբ, իրենց աստվածաբանական ուսումը շարունակում են Անգլիայում, կրոնական համապատասխան բարձրագույն հաստատություններում: Տեսուչ հայրը ցանկություն է հայտնում, որ այսուհետև ևս ճեմարանը հնարավորություն ունենա նոր ուսանողներ ուղարկելու Անգլիա՝ քարոչական օժանդակությամբ անգլիկան եկեղեցու:

Այցելության ժամանակ խոսք է առնում նաև դոկտ. Ֆրեդերիկ Դոնադ Կոզանը՝ ողջունելով ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը և ներկայացնելով նրանց Անգլիայի հոգևոր ճեմարանների ներքին կյանքը: Մեծապատիվ հյուրը իր օրհնությունն ու պատգամն է տալիս ուսանողներին՝ թելադրելով, որ նրանք լինեն հավատքի և սուրբության մարդ, ինչպես եղել են հայ եկեղեցու մեծ սրբերը և վարդապետները ու Գրիգոր լուսավորչից սկսած:

Վերջում Քենթրբերիի արքեպիսկոպոսը հորդորում է ուսանողներին լավ սովորել և հրավեր է ուղղում նրանց գալ Անգլիա՝ շարունակելու իրենց աստվածաբանական բարձրագույն կրթությունը:

Հոկտեմբերի 1-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի հարգարժան հյուրերը Երևանում այցելում են ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան և դիտում դարերի ընթացքում հայ ժողովրդի ստեղծած հոգևոր մշակույթի անգին գանձերը:

Ժամը 12-ին հյուրերը մեկնում են ս. Գեղարդ վանք: Այստեղ նրանք «Հրաշափառ»-ով ընդունվում են վանքի վանահայր տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի և վանական միաբանության անդամների կողմից: Ս. Գեղարդ վանքի պատմության մասին հյուրերին համառոտակի տեղեկություններ է տալիս վանահայր սրբազանը:

Հարգելի հյուրերն այնուհետև այցելում են Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ վերակառուցված եկեղեցի, ուր տեղի է ունենում մասնավոր աղոթք էկումենիկ ոգով:

Հանուն Արարատյան թեմի հոգևորականության, թեմական իշխանության և հավատացյալների, առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը ողջունում և բարի գալուստ է մաղթում Մայր Աթոռի հյուրերին: Ավելի ուշ, ժամը 15-ին, Արարատյան թեմը հյուրերի պատվին ճաշկերույթ է տալիս Երևանի «Անի» հյուրանոցում:

ՀԻՄՆԱՐԿԵՔ ԱԼԵՔՍ-ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՎ ՊԱՏԿԵՐԱՍՐԱԶԻ

Սեպտեմբերի 30-ին, ժամը 18-ին, Նոր Վեհարանի շրջափակի արևմտյան մասում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Ալեքս և Մարի Մանուկյանների նվիրատվությամբ կառուցվելիք Մայր Աթոռի նոր մատենադարանի և պատկերասրահի շինության հիմնարկերի օրհնությունը:

Արարողությանը ներկա են լինում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող բարձրաստիճան հայ հոգևորականները՝ տ. Եղիշե սրբազան պատրիարքի գլխավորությամբ, ներքին թեմերի առաջնորդ սրբազանները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի ուսանողությունը և բազմաթիվ հրավիրյալներ:



Ալեքս-Մարի Մանուկյանների նվիրատվությամբ կառուցվելիք մատենադարան-թանգարանի
 հիմնարկերի օրհնության մի պահ. Վեհարանի արևմտյան շրջափակում

Հիմնարկների օրհնությանը ներկա է լինում նաև Քենթրբերիի արքեպիսկոպոսը իր շքախմբի անդամներով:

Հիմնարկների օրհնության արարողությունից հետո շինության առաջին քարի ներքև զետեղվում է, որպես գալիք դարերի համար պատմական փաստաթուղթ, մի «Գիր վկայության» (տես նկարը), որն ստորագրվել էր երկու պետերի և հանդիսությանը ներկա հոգևորականների ու Գերագույն հոգևոր խորհրդի անդամների կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 19-ին, երկու Հայրապետները, արքազան պատրիարք հայրը, հայրապետական շքախմբի անդամները և Մայր Աթոռի ողջ միաբանությունը Մայր տաճարում ներկա են լինում կիրակամտի հանդիսավոր ժամերգությանը և էկումենիկ աղոթքին:

Հավարտ ժամերգության, ի պատիվ Մայր Աթոռի հարգարժան հյուրերի, Մայր տաճարում տեղի է ունենում հոգևոր համերգ՝ Մայր տաճարի երգեցիկ խմբի կատարմամբ և ղեկավարությամբ երգչախմբի ղեկավար **Խորեն Մելիսյանի**:

Համերգի ծրագրում տեղ էին գտել հատվածներ մեր եկեղեցական շարականներից, ս. պատարագի երգերից, ինչպես նաև ռուսական և արևմտաեվրոպական հոգևոր երաժշտությունից:

Ժամը 21-ին երկու Հայրապետները, արքազան պատրիարքը, հայ և անգլիկան բարձրաստիճան հոգևորականները և վանքի միաբանությունը միասին ընթրում են վանական սեղանատանը:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 2-ին, կիրակի օրը, ժամը 11-ին, օրվա հանդիսությունների առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Երուսաղեմի հայոց պատրիարքության դիվանապետ և ընծայարանի վերատեսուչ **տ. Շահն արքեպ. Աճեմյանը**:

Ժամը 11.30-ին երկու Հայրապետները, Երուսաղեմի արքազան պատրիարքը, հայ և անգլիկան բարձրաստիճան հոգևորականությունը եկեղեցական թափորով, Մայր տաճարի ավետավոր դողանջների ներքո, առաջնորդվում են Մայր տաճար՝ ներկա լինելու պատարագի արքազան արարողությանը:

Մայրավանքի շրջափակում հավաքված ուխտավորների հոծ բազմությունը ջերմ արտահայտություններով ողջունում է եկեղեցական հանդիսավոր շքերթը դեպի Մայր տաճար:

Մայր տաճարը նույնպես լի է ջերմեռանդ հավատացյալների խտուն բազմությամբ: Այս առթիվ հայոց հավատքի ու աղոթքի այս դարավոր Տունը զարդարվել է տոնականորեն: Ամեն կողմ լույս, վեհություն և հանդիսավորություն: Սուրբ պատարագի երգեցողությունը խորունկ ապրումով կատարում է Մայր տաճարի երգչախումբը:

Ս. պատարագի երգեցողությանը որոշ մեներգների կատարումով իրենց շնորհալի մասնակցությունն են քերում սիրված երգչուհիներ **Գոհար Գասպարյանը** և **Լուսինե Զաքարյանը**:

Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, բազում մտավորականներ և արվեստագետներ, ինչպես նաև ՀՍՍՀ Միևիպտրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի անդամներ՝ գլխավորությամբ տեղակալ Անդրանիկ Հասրաթյանի:



Ս. Մեսրոպ Մաշտոցի հուշարձանի առջև. Մատենադարան

Ս. պատարագին ներկա են նաև այդ օրերին Մայր Աթոռում գտնվող բազում սփյուռքահայ հավատացյալ ուխտավորներ աշխարհի տարբեր երկրներից:

Այսօր, հոկտեմբերի 2-ին, նշվում է նաև Ամենայն Հայոց Հայրապետի զահակալության 22-րդ տարեդարձը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետի զահակալության և Քենթրքերիի արքեպիսկոպոսի Մայր Աթոռ այցելելու ուրախ առիթով քաղաքում է պատարագիչ սրբազանը՝ «Եւ վաղվադակի թողեալ զուղկանս իրեանց գնացին զհետ Նորա» (Մատթ. Դ 20) բնաբանով: Քարոզիչ սրբազանը ոգեկոչում է Հին և Նոր Կտակարանների մեծ սրբերի կյանքի և գործունեության օրինակը՝ շեշտելով, որ հավատքի և գործի այդ նվիրյալները լքեցին ամեն բան և գնացին աստվածային այն ձայնի ետևից, որ նրանց

կանչում էր դեպի առաքելություն՝ տանելու համար Աստծու օրհնությունը և պատգամը աշխարհին:

Դարերի ընթացքում հայ եկեղեցու կամարների տակ էլ հնչել է աստվածային այդ ձայնը, և մեր լուսաբնակ հայրապետները, հնազանդ իրենց հոգևոր կոչման ու ծառայության ուխտին, անվարան գնացել են այդ կանչի ետևից:

Հայ եկեղեցու պատմության մեջ, ս. Գրիգոր Լուսավորչի օրերից սկսած մինչև մեր օրերը, այդ ձայնը հնչել է հայ հավատացյալների հոգիներում՝ լուսավորելով նրանց ճանապարհները՝ ընթանալու համար Ավետարանի վեհ պատգամների լույսի տակ դեպի աստվածային ճշմարտություններ, շատ հաճախ նահատակության գնով:

Իր քարոզի մեջ պատարագիչ սրբազանը նշում է, որ անցյալի մեր երանաշնորհ, աստվածարյալ և առաքելաշավիղ հայրապետներից մեկն է նաև արդի Ամենայն Հայոց Հայրապետը, որն Իր գահակալության անցած 22 տարիների ընթացքում միշտ ունկնդրել է երկնային բարձունքներից հրեշտո ձայնը և իր եկեղեցին ու ժողովրդին առաջնորդել դեպի աղբյուրը քրիստոնեական հավատքի լույսի:

Նորին Սրբությունն Իր գահակալության 22 տարիներին նոր փառքով է պայծառացրել հայ հավատքի կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածինը՝ իր հոգևոր, մշակութային, կրթական, հայրենամոլեր և խաղաղասիրական արդյունավետ իրագործումներով:

Այստեղ, — նշում է քարոզիչ սրբազանը, — այս սուրբ տաճարում և Մայր Աթոռում եղբայրական սիրով ի Քրիստոս հյուրընկալվել են նաև քույր եկեղեցիների հոգևոր պետեր և եկեղեցական պատվիրակություններ:

Այսօր, — շեշտում է սրբազանը, — Հայոց Հայրապետը, Մայր Աթոռ ս. Էջմիածինը և Հայաստանյայց առաքելական ողջ եկեղեցին արտագին ուրախությունն ու մխիթարությունն ունեն ողջունելու և բարի գալուստ մաղթելու Քենթրբերիի արքեպիսկոպոս Նորին Գերաշնորհություն դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանին և նրա շքախմբի հարգելի անդամներին: Այս ալցելությունը մեր եկեղեցու պատմության մեջ կատարվող առաջին իրադարձությունն է, որը կոչված է է՛լ ավելի խորացնելու և ամբողջացնելու երկու քույր եկեղեցիների միջև հաստատված բարեկամական սիրալիր հարաբերությունները:

Իր քարոզի ավարտին տ. Ծանե արքեպիսկոպոսը սուրբ խորան է հրավիրում Քենթրբերիի արքեպիսկոպոսին՝ իր ողջույնի և օրհնության խոսքն ուղղելու Մայր տաճարում գտնվող հայ հավատացյալներին:

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՂԶՈՒՅՆԻ ԽՈՍՈՒՐԸ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Խորապես երախտապարտ եմ անգլիկան եկեղեցու շքախմբին և ինձ ուղղված ողջույնի խոսքերի համար և իմ ջերմագին շնորհակալություններն եմ հայտնում իմ արքեպիսկոպոս Եղբորը:

Երջանիկ մի առիթ եղավ մեզ բոլորիս համար ոչ միայն այցելել այս սուրբ քաղաք, այլ նաև պաշտամունք կատարել ձեզ հետ այս սուրբ օրը և միացնել մեր աղոթքները ձեր աղոթքներին՝ հալցելու համար Աստծու օրհնությունը այս եկեղեցու և այս ազգի վրա:

Մասնավորաբար երջանիկ եմք, որ Մեր ալցելությունը զուգահեյակ է ձեր սիրելի կաթողիկոսի գահակալության 22-րդ տարեդարձին: Մենք սի-

րով բերում ենք Նորին Սրբությանը Մեր աղոթքների և Մեր բարի մաղթանքների վստահությունը: Թող երկար տարիներ Նա շարունակի մնալ ձեր Հովվապետը, և աստվածային օրհնությունները թող անպակաս լինեն Իր և Իր գործակիցների վրայից: Վաղը Մեծ Բրիտանիա վերադառնալով՝ չպիտի մոռանանք հիշել Նորին Սրբությանը, Նրա եպիսկոպոսներին, հոգևորականությանը և հայ հավատացյալ ժողովրդին Մեր աղոթքների մեջ:

Պատմության ընթացքում մեր երկու ժողովուրդներն էլ տառապել են խորապես: Մենք չենք կարող մոռանալ հայ ժողովրդի ցեղասպանությունը 1915 թվականին: Խորապես տառապել ենք երկու համաշխարհային պատերազմների ընթացքում և սարսափահար դիտել մահ հրեաների ցեղասպանությունը: Տառապել ենք որպես ժողովուրդ և բոլորս էլ, ավելի կամ պակաս, տառապել ենք որպես անհատներ: Կյանքը հեշտ չէ: Էականն այն է, թե ինչպես պետք է կարողանանք հակազդել մեզ պատճառված տառապանքին: Կարող ենք թույլ տալ, որ տառապանքը ատելության վերածվի մեր մեջ. կարող ենք մահ թույլ տալ, որ մեր տառապանքը, որպես ազգություն կամ անհատներ, մեզ դառնացնի: Եթե սպդպես անենք, մեր տառապանքը կվերածվի մի վերքի, որը երբեք չի բուժվի և այն չարիքի պատճառ կլինի մեր մեջ և մեր տան մեջ: Այս՝ տառապանքին հակազդելու առաջին կերպն է, սխալ կերպը:

Մյուս կերպը հետևյալն է. մեր տառապանքը դնել Աստծու ձեռքերի մեջ: Կարող ենք թույլ տալ, որ Աստված մեր տառապանքից վերցնի ինչ որ Ինքը կուզենա և այն վերածի ինչ բանի որ Ինքը ցանկանա: Այս քրիստոնեական կերպն է տառապանքի հետ վարվելու: Սրան է ակնարկում ս. Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված նամակում: Պողոս առաքյալը գիտակցում էր, որ իր քրիստոնյա բարեկամներից շատերը խորապես տառապում էին, և մա գրեց նրանց, որ Աստված մի լավ բան պիտի դուրս բերի նրանց տառապանքից: Աստծու ձեռքերի մեջ տառապանքը կարող էր տոկունության վերածվել, և տոկունությունը՝ ուժեղ նկարագրի, և ուժեղ նկարագիրը մի անմար հույսի ծագումը կտար նրանց: Եվ սմեմափառավոր արդյունքն այն է, որ այդ տառապանքն Աստծու ձեռքերի մեջ պիտի վերածվի սիրո: Մերը Մասծու պարզևն է իր զավակներին:

Ահա այս է այն, ինչ Աստված կարող է անել իր զավակներին, երբ նրանք իրենց տառապանքները դնում են Աստծու ձեռքերի մեջ:

Վերջին համաշխարհային պատերազմի սկզբներին մեր թագավորը՝ Գևորգ Զ-ը, մի պատգամ տվեց իր ժողովրդին: Այն ժամանակ մենք լուրջ վտանգի մեջ էինք, և հեռանկարները շատ վատ էին: Ահա ինչ որ թագավորը ասաց իր ժողովրդին. «Դրեք ձեր ձեռքերը Աստծու ձեռքի մեջ և պիտի ունենաք լույս»: Այս է նույնպես պատգամը՝ Քենթրբերիից ուղղված ձեզ դուք ձեր ձեռքերը դրեք Աստծու ձեռքերի մեջ, և Նա պիտի առաջնորդի ձեզ անվերապա ու պիտի ուղեկցի ձեզ առանց խաբխափումի:

Մեր գերագույն ուրախությունն է պաշտամունք մատուցել ձեզ հետ ապսոս ի ներկայության Նորին Սրբության և Նրա եղբայրների՝ արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների, հոգևորականների և ժողովրդի:

Եվ այժմ հացում եմ Աստծու օրհնոթյունը ձեր բոլորի վրա:

Թող ամենակարող Աստծու օրհնությունը՝ Հոր, Որդու և ս. Հոգու, մնա ձեր վրա, ձեր ազգի վրա, ձեր եկեղեցու և ընտանիքների վրա այժմ և հավիտյան. Ամեն:

Հավարտ ա. պատարագի Մայր տաճարում կատարվում է Հայրապետական մաղթանք Հայոց Հայրապետի գահակալության 22-րդ տարեդարձի առթիվ:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Մայր տաճարում տեղի ունեցած եկեղեցական արարողություններից հետո երկու Հայրապետները և պատրիարք սրբազանը եկեղեցական մեծ թափոռով առաջնորդվում են Վեհարանի գահասրահ, ուր Հայոց Հայրապետը Իր գահակալության տարեդարձի ուրախ առիթով ընդունում է շնորհավորություններ:

Գահասրահում Վեհափառը և Քեհյոթերիի արքեպիսկոպոսը փոխանակում են բարիգալստյան, ողջույնի և շնորհավորանքի պաշտոնական ուղերձներ:

Առաջինը Հայոց Հայրապետը արտասանում է Իր խոսքը (տես «Էջմիածին» ամսագիր, սույն համար, էջ 3):

Իր ողջույնի խոսքի ավարտին Հայոց Հայրապետը, ի նշանավորումն հայ և անգլիկան եկեղեցիների օրավոր զարգացող բարեկամության, Քեհյոթերիի արքեպիսկոպոսի կողմից զարդարում է ա. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ադամանդակուռ շքանշանով՝ բոլոր ներկաների խանդավառ ծափերի տակ:

Այնուհետև հանդես է գալիս անգլիկան եկեղեցու պետը պատասխան ուղերձով (տես էջ 8):

Հայոց Հայրապետի և Քեհյոթերիի արքեպիսկոպոսի ելույթները լսվում են հարաճուն հետաքրքրությամբ և ջերմությամբ:

Այս պատմական հանդիպումի ավարտին Հայոց Հայրապետի և Քեհյոթերիի արքեպիսկոպոսի միջև փոխանակվում են մաս ալ հուշանվերներ:

ՀՐԱԺԵՇՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը, ի պատիվ անգլիկան եկեղեցու պատվիրակության, տրվում է հրաժեշտի ճաշկերույթ, որին ներկա են լինում շուրջ 60 հրավիրյալներ:

Սեղանակիցների թվում են Երուսաղեմի հայոց ամենապատիվ պատրիարքը, անգլիկան եկեղեցու պատվիրակության անդամները, տ. Սերովրե, տ. Պասկ, տ. Կոմիտաս, տ. Թորգոմ, տ. Ծահե, տ. Վաչե արքեպիսկոպոսները, տ. Գարեգին, տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Գևորգ եպիսկոպոսները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ՝ պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանը, պրոֆ. Կարպիս Կարազյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամներ՝ ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանը, պրոֆ. Վարազդատ Հարությունյանը, պրոֆ. Ալեքսանդր Սահինյանը, Կոստանդին Ալթունյանը, Մայր Աթոռի ճարտարապետ Արծրուն Գալիկյանը, Մայր Աթոռի վերստուգիչ հանձնաժողովի անդամներ՝ Եփրեմ Ալեքսանյանը և Բարսեղ Թաշճյանը, ինչպես նաև Մայր Աթոռի ղեկավար աշխատակիցներ:

Ընդունելությանը ներկա են նաև ՀՍՍՀ Միևիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասարայանը և խորհրդի անդամ Մանվել Բաբլոյանը, ինչպես նաև սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը և տեղակալ Անդրանիկ Մարտիրոսյանը:

Հրավիրյալների թվում են Եվեցարիայից հանրածանոթ ազգային գործիչ Մկրտիչ Եվեֆյանը՝ իր տիկնոջ հետ, սիրված երգչուհի Գոհար Գասպարյանը, տեր և տիկին Կարապետ Ալթունյանը, տիկին Տանձիկյանը, տիկին Դեմիրճյանը՝ հեյրուֆից, և ուրիշներ:

Ընդունելության ժամանակ հրաժեշտի և շնորհակալության արտագին ճառեր են արտասանում Հայոց Հայրապետը, Քենթրբերիի արքեպիսկոպոսը և տ. Եղիշե սրբազան պատրիարքը:

Հանուն ՀՍՍՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի, նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը նույնպես ջերմորեն շնորհավորում է Հայոց Հայրապետի գահակալության 22-րդ տարեդարձը և ողջունում Քենթրբերիի արքեպիսկոպոսի, նրա շքախմբի անդամների, Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքի և հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների ներկայությունը Մայր Աթոռում և Հայաստանում:

Հրաժեշտի սույն ընդունելությունն ավարտվում է ջերմ մթնոլորտում, Հայոց Հայրապետի գոհաբանական աղոթքով:

Երեկոյան ժամը 20-ին Բյուրականի Հայրապետական վիլլայում, նեղ շրջանակում, տեղի է ունենում վերջին գրույցը երկու Հայրապետների և երկու քույր եկեղեցիների պատվիրակությունների միջև:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Հոկտեմբերի 3-ին, երկուշաբթի, առավոտյան, Վեհարանում տեղի է ունենում վերջին տեսակցությունը երկու Հայրապետների և Նրանց շքախմբի անդամների միջև:

Այս առթիվ հանդիսավոր իրադրության մեջ ստորագրվում է, որպես պատմական փաստաթուղթ, համատեղ մի հաղորդագրություն (տես էջ 11):

Այնուհետև, ժամը 10-ին, երկու Հայրապետները, տ. Եղիշե սրբազան պատրիարքը եկեղեցական թափորով առաջնորդվում են Մայր տաճար՝ աղոթելու բարեհաջող ուղևորության համար:

Ապա ավտոմեքենաների շքերթն ուղղվում է դեպի Երևանի քաղաքային օդանավակայան, ուր հանդիսավորապես ճանապարհվում է անգլիկան եկեղեցու պետ Նորին Գերաշնորհություն Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանը իր շքախմբի անդամների հետ:

Հարգարժան հյուրերին ճանապարհում է նաև ՀՍՍՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հուզիչ էր պահը և պատմական, երբ երևանյան աշնանային պայծառ առավոտյան Քենթրբերիի արքեպիսկոպոսը և պատվիրակության անդամները, եղբայրական ջերմ սիրով ի Բրիատոս, հրաժեշտ էին առնում Հայոց Հայրապետից, տ. Եղիշե սրբազան պատրիարքից, հայ բարձրաստիճան հոգևորականներից ու հայոց հայրենիքից լավագույն և ամենուրեք տուգնություններով:

Սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 3 օրերը, անգլիկան եկեղեցու գերագույն պետի պատմական այցելությամբ Մայր Աթոռ ու Էջմիածին, հանդիսացան մեր ժամանակաշրջանի միջեկեղեցական էկումենիկ հարաբերությունների պատմության և մանավանդ երկու եկեղեցիների տարեգրության մեջ նշանակալից ու կարևոր մի իրադարձություն: